ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի արտոնությամբ և օրհնությամբ Մայր Աթոռի միաբան Տ. Մասիս քհն. Գալստյանը ձեռնհասությամբ եվրոպական նոտագրության վերածեց Գևորգ Դ կաթողիկոսի օրոք, 1875 թ., Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Նիկողայոս Թաշճյանցի կազմած «Ձայնագրեալ շարական հոգևոր երգոց»-ը:

Վերջերս Մայր Աթոռում լույս ընծայվեց այդ աշխատության առաջին հատորը, որի մեջ վերեղված են Հարության բոլոր շարականները՝ Օրհնությունները և Հարցերը՝ իրենց «Մեծացուսցէ»-ներով, «Ողորմեա»-ներով, «Տէր յերկնից»-ներով, «Մանկունք»-ներով և «Համբարձի»-ներով՝ ըստ 1885 թվականի նույնպես Մայր Աթոռում հրատարակված Ձայնքաղ Շարակնոցի հերթականության:

Սույն գործը հրատարակվում է այն առաջադրանքով, որ Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում ժամակարգությանց ընթացքում հոգևոր երգեցողությունները կատարվեն համաձայն սույն վերծանության: